

Ցանկացած իրողություն սեփական գոյությունն ապահովելու համար, տիեզերքի մերձակա ու հեռավոր բոլոր ազդեցությունները հավասարակշռող միկրոկոսմոս է ենթադրում իրենից, և տրամաբանորեն բոլոր համակարգերի միասնության շղթան յուրաքանչյուրի միջոցով առանձին, մեզ նորից վերադարձնում է հազար անգամ փորձված իմաստնությանը. □ Ամեն ինչ արտացոլված է ամեն ինչում՝ «Հերմես Տրիսմեգիստ», ուստի աշխարհի ԸՆԹԱՑՔԸ բխում է իր իսկ չընդմիջարկվող կերպարանափոխությունից, որի դիտորդն ենք: Թոմաս Պինչոնի հերոսը՝ ԿալիստոնՔ, փորձելով փրկվել էնտրոպիայից, տեղավորվում է □ փակ՝ համակարգում և, համաձայն սեփական տեսությանը. □ Մեկուսացված համակարգը՝ գալակտիկան, շարժիչը, մարդը, մշակույթը, ինչ պատահի՝ անընդհատ պետք է ձգտի առավել հաստատուն վիճակի՝ դատապարտում է այն դանդաղ մահվան □ ...՝: Նա կանխատեսում էր սեփական մշակույթի ջերմային մահը, երբ գաղափարները չեն կարող այլևս փոխանցվել, քանի որ համակարգի բոլոր կետերի էներգիան, ի վերջո, հավասարվում է և ինտելեկտուալ շարժումը, այդ ձևով, սկսում է դադարել: Եթե էնտրոպիկ միջավայրը հավասարազոր է դառնում քաոսին, ապա ստեղծագործության մեջ անմիջապես չի գիտակցվում որպես բարու հակառակ բևեռ (խաղաղություն (կարգ ու կանոն) - բարի, քաոս - չար), այլ տողի այլակերպման (երկրորդ տեքստի ընթերցմամբ) միջոցով քաոսն իր ներսում զուգորդում է աստ - լինելության (Da - Sein) գաղափարը, որն իրական աշխարհն է: Իրական այս աշխարհում էլ կենսագործվում է մարդու ներհայեցումը և ԱՅԼ- ա - գոյության սահմաններում դառնում առասպելաբանական - իմացաբանական նախահնչույթ: